2023 թվականի դեկտեմբերի 5-ին ժամը 11:30-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի շենքում կկայանա մրցույթ՝ Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող, այլ հողատեսքի վարձակալության համար գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, 25 (քսաքնհինգ) տարի ժամկետով:

Կադաստրային ծածկագիր՝ 10-018-0125-0023, մակերեսը՝ 3,10879 հա, որից վարելահող 1,31724հա և այլ հողատեսք 1,79155հա, մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 150 (մեկ հարյուր հիսուն) տոկոսը:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը 2023 թվականի նոյեմբերի 29-ին, ժամը՝ 18:00-ին, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, քայլի չափը հաշվել մեկնարկային գնի 5%-ի չափով, հողամասն ապահովված է մոտեցման ճանապարհով, հողամասում ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքներ առկա չեն, և հողամասի նկատմամբ սահմանափակումներ, սերվիտուտներ չկան, մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, անձնագրի պատճեն, մասնակցության վճարի անդորրագիր, մասնակցության վճար՝ 10 000 դրամ: